

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱՍԻԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵԽ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵԽ
ՈՒՄԻՇ ԵՐԿՐՄԵՐՈՒՄ *)

Գլ. III.

Անասնապահութինից և կաթնատնտեսութիւնից ստացած և կամուտը բարձրացնելու միջոցներ.—Կրթական հիմնարկութիւններ,—Կաթի արտահանութիւնը դէպի քաղաքները,—Խպաղործութեան և պանրագործութեան կատարելազորած ձեւներ.—Կապիտալիստական ձեփ բացասական կողմերը.—Ընկերութիւնների և համայնական ձեռնարկութիւնների դերը տեխնիկակի և առևտի զարգացման վերաբերմամբ.—Սիրիիրիալի, Ամերիկայի և Դանիայի օրինակները.

Հոկտեմբեր ամսում Թիֆլիսում կայացած կովկասի անառնապահների և կաթնատնտեսների ժողովների նպատակներից մէջն էլ այդ խնդրի պարզելն էր, այսինքն ինչ միջոցներով կարելի է բարձրացնել ներկայումս անամսապահական ճիւղերից ստացած համամատաբար չնշին եկամուռը։ Թողնելով մի կողմ այդ ժողովներում խօսուածների մանրամասնութիւնները, առաջարկուած բոլոր միջոցները կարելի է բաժանել երկու կարգի՝¹⁾ ինչ միջոցներով տարածնել տեխնիկական դիտութիւններ և²⁾ ինչ միջոցով բաց անել աւելի լայն շուկայ անասնապահութեան այլ և այլ միջերքների համար և դրանով բարձրացնել ստացուող մթերքների զնները։

Առաջի հարցի մասին ես երկար չեմ խօսիլ, ի՞նչն ըստ ինքեան պարզ է, որ կաթնատնտեսութեան և անասնապահութեան շահերի պաշտպանութեան համար ժողովի կողմից ընտրուած յատուկ մարմնի կազմակերպելը, շրջող մասնադէտ-վարպետների նշանակելը՝ զանազան տեխնիկական նորմութիւններ տարածելու համար, ինչպէս և ալպեան (լեռնային) փորձ-

Նական-դիտական կայարանի բաց անելը Անդրկովկասի որ և է անասնապահական վայրում—շատ ցանկալի կը լինէր:

Բայց, մոռանալու չէ և նա, որ այդ հիմնարկութիւնները ով զիտէ զեռ երբ բացուեն. չինովնիկական ձեռնարկութիւնները միշտ ունեն իրանց խոշոր թերութիւնները, որոնցից զուրկ չեն լինի և վերը նշանակուածները. միւս կողմից, անհերքելի է, որ մինչև օրս կատարուած փոփոխութիւնները կաթնատանտեսութեան մէջ առաջ են եկած չորհիւ շուկայի պահանջի և մասնաւոր մարդկանց նախաձեռնութեան:

Անկասկած, այդ նախաձեռնութիւնը շուկայի լայնանալու հետ միասին կը խաղայ մնձ դեր և ապագայում Խնդիրը, ուրեմն, գալիս է նրան, թէ ինչ ձեռնարկութիւն և անամնապահական ճիւղ այս բոպէիս ամենաձեռնապահ և ամենաշահաւէտն է Անդրկովկասում:

Կաթի վաճառումը այդ տեսակէտից արժանի է լուրջ ուշադրութեան:

Թիֆլիսում (ինչպէս և միւս քաղաքներում) կաթի պուղը ծախուում է $2-1\frac{1}{2}$ -ի ամենացածր 120 ոուրլով:

Նոյն կաթը կովկասի զանազան անկիւններում զնահատում՝ է $40-60$ կոպ.։ Անկասկած, այն բոլոր արօտ և խոտհարք ունեցող լևանային գիւղերը, որոնք 5—15 վերստի վրայ են, երկաթուղիներից, լաւ շահ կարող են ստանալ, եթէ զրադուէին կաթի արտահանութեամբ դէպի քաղաքները:

Փոխադրութիւնը այդ դէպում (հաշուելով և յատուկ մետաղեայ ամանները, և սառուցի պահելը, և երկաթուղու ծախցերը, և կորուսարը) կը նստէր բաւականին արժան և ամեն մի պուդ կաթը կը տար գրանով զրադուղին $20-30$ կոպէկ ներկայից աւել:

Նամանաւանդ ասածիս իրադուելը հեշտանում է նրան ոսպ, որ երկաթուղու վարչութիւնը կաթնեղէն և մրգեղէն փոխադրելու համար իր զնացքների մէջ մացրած է յատուկ վազոններ, որոնք ձմեռոր տափացւում են իսկ ամասը սառցւում: Բայց այդ, շուտ փչանող մթերքները երկաթուղին տանում է մարդատար զնացքների հետ, փոխադրութեան վարձը վերցնելով ապրանքատար զնացքի հաշուով:

Ուշադրութեան արժանի է այս հարցի վերաբերմամբ և նա, որ այս դէպում կաթ արտահանող գիւղերին և մասնաւոր անձանց աւելի ձեռնտու կը լինի պահել շատ կաթ տուող, թէ կուզ աւելի մնձ արժէք ունեցող կոմերի Ակադեմիկոս Միւրգենտորֆ *) հաշուած է որ 1000 ֆունտ (25 պուդ.) քաշ ունեցող

*) Ботаникъ, Справочная книга русского хозяина.

լաւ կովը տալիս է մինչև 5000 ֆ. կաթ, սպառելով օրական 30-ական ֆ. ամենալաւ խոտ, կամ տարին 10,950 ֆ.։

Մի փունտ կաթ արտադրելու համար այս տեսակ կովը սպառում է ուրեմն 2 ֆ. խոտ Այն ինչ փորձերը ցոյց են տուած, որ ամենալաւ կովերը 1 ֆ. կաթ տալու համար ուտում են միայն $1\frac{1}{2}$ ֆ. խոտ, իսկ վատ կովերը—մինչև 4 փունտ Վախինալ, որ քաղաքները մեծ քանակութեամբ կաթ բերելով, կաթի գինը կ'ընկնի և այդ ճիւղը անձեռնտու կը դառնայ—սխալ է։

Թիֆլիս քաղաքի քիմիական լաբորատօրիայի քննութիւններից երեսում է, որ ծախուող կաթի մեծ մասը խարդախուած է զանազան անվաս և վնասակար նիւթերով (ալիւր, կաւիճ, ջուր, սալիցիլի և այլն). Թէ ինչ աստիճանի է համուռ կաթի կեղծելը թիֆլիսում—մենք ճշտորէն չը դիտենք, բայց Մոսկուայում պրօֆ. էրիսմանի *) հաշուով իւղի քանակութիւնը, խկական կաթի 416 0/0-ի տեղ, շուկայում իջնում էր պասին 377 0/0-ի, ուախին 256 0/0-ի, մանր խանութներում 245 0/0-ի, և իտրում հրապարակում 064 0/0-ի եալին։

Ահա ինչու, երբ մի ան Զիշկին կաթի առետուրը Մոսկայում զրեց լայն, բայց ազնիւ հողի վրայ, կաթի գինը այնտեղ չիջաւ, իսկ սպառումը մի քանի տարում աւելացաւ երկու անգամ։ Նոյնն է և Կովկասի քաղաքներում վախենալով կեղծիքից շատերը կամ չեն գործածում կաթը, կամ զործ են ածում շատ փոքր չափով. հէնց որ համոզմունք կայացաւ որ այս կամ այն զիւգերը, ընկերութիւնները, քիրմանները ծախում են անարատ կաթ—կաթի պահանջը կը բարձրանայ առանց աղղելու գների վրայ, կամ նոյն իսկ բարձրացնելով վերջիններս...։

Մրան կը նպաստէ և այն հանգամանքը, որ կաթի կեղծելու դէմ կառւելու համար ներկայումս մշակում են յատուկ պաշտօնական միջոցներ։

Առայժմ ես չեմ ուզում խօսել նրա մասին, որ երկաթուղուց հեռու վայրերը կարող են կաթը արտահանել կամ ենթարկելով նրան պաստերիզացիայի (մինչև 60° տաքացնելու), կամ թանձրացնելով (մինչև $1/4$) և յատուկ կողովներում փակելով։

Երկրորդ ճիւղը, որ մեծ ապագայ է խոստանում կովիասում—դա չվեցարական և եւրոպական այլ պանիրների պատրաստելն է։ Թէս մենք չունենք մանրամասն հետազոտութիւն-

*) Մոլոկ (Թնգակլոպեդիկ. հայութ Թֆրոն)։

ներ կովկասի կովի կաթի յատկութիւնների մասին, բայց միքան արդէն պարզուած է, որ մնր կովերի կաթը ընդհանրապէս աւելի խնոս է, աւելի իւղ է պարունակում, քան եւրոպական կովերի կաթը։

Եւրոպայում կաթը պարունակում է	. 30% իւղ։
Եւրոպ. Ռուսաստանում	. . 42 » »
Սիբիրիայում (ամառ և ձմեռ)	. 5—6 » »
Կովկասում » » . 4—6 » »	

Բացի այդ, չնորհիւ երեխ լեռնային ընտիր արօտների, մեր կովկասից ստացւում է այն տեսակ ընտիր պանիր, որ անկարելի է լինում ստանալ Եւրոպական Ռուսաստանում։ Այս պատճառով կովկասի պանիրները Ռուսաստանի շուկայում միշտ 1—2 ռուբլով աւելի են գնահատւում Ռուսաստանի պանիրներից և տարեց տարի աւելի ու աւելի լայն ասպարէղ են բացում իրանց սպառման համար։

Թէ ինչքան շահաւէտ է պանրագործութիւնը Եւրոպական ձեռվ, կարելի է եղարակացնել նրանից, որ կովի անքաշ, քաշուած և ոչխարի անքաշ պանիրները տեղական ձեռվ պատրաստուած ժամանակ ծախուում են պուդը 3—4, $1\frac{1}{2}$ —3 և 4—5 ռուբլով, այն ինչ՝ նոյն քանակութեամբ կովից, նոյն քանակութեամբ ստացուած միայն Եւրոպական ձեռվ պատրաստուած պանիրները (շվեյցարական, հոլլանդական, բօկֆօր) արժեն 2—12, 6—8 և 15—20 ռուբլի. այսինքն, Եւրոպական ձեռվ պատրաստուած մթերքները երեք անգամ աւելի են գնահատւում, քան տեղական ձեռվ պատրաստուածները։ Դա էր պատճառը, որ զիւլզանտեսական ճիւղերից և ոչ մէջ չի կրել կովկասում (թէև շատ նեղ շրջանում) այն փոփոխութիւնը, որ կրել է պանրագործութիւնը և իւղ պատրաստելը Եւրոպական ձեռվ։

Պանիր և իւղ Եւրոպական ձեռվ պատրաստելու համար առաջի գործարանը շինած է Կովկասում բարօն Ա. Ֆ. Կուչենբախը 1863 թուին։ Կուչենբախի օրինակով միւս տարին բացուած է և Ալեքսանդրսկիլֆ գերմանական կոլոնիայի համայնական գործարանը։ 80-ական թուականներից, երբ կովկասի պանիրները սկսուեցին արտահանուել Ռուսաստան, Եւրոպական ձեռվ պատրաստուած պանիրի գործարանները, կամ ինչպէս ստում են ժողովրդի մէջ, զավօղները, ստացման մի առանձին դարկի 1899 թուին *) պանիրի գործարանների թիւը Անդրկովկասում հասնում էր 15-ի, իսկ պատրաստուած պանիրի քանակու-

*) Կրատկա սեմենիա օ состоянії с. խօ. на Кавказѣ, Т. 1900 թ.

Թիւնը—13500 պուղիս Հիմա (1901) գործարանների թիւը հասնում է 23-ի, որոնք պատրաստում են ոչ պակաս 18,000 պ. շվեյցարական պանիր:

Ամեն մի նոր գործարան և վերջի երկու արուայ ընթացքում պատրաստուած պանիրի քանակութիւնը աւելացած է $\frac{1}{3}$ -ով (380/0):

Պանիրի գործարանները կննուրոնացած են թիվլիսի նահանգի հօրչալուի գաւառի լեռնային մասում (Բազենչիթ և Լոռի), թէև մի գործարան կայ Կարսի շրջանում և մի ուրիշը Գանձակի նահանգում: Գործարանների մեծ մասը պատկանում են շվեյցարացիններին (Յնընի կանառնից), որոնք սկզբում եկած են Կովկաս իրեն վարպետներ այս կամ այն արդէն գոյսութիւն ունեցող գործարանը:

Վերջերս կատարելագործուած պանրագործութեամբ սկսել են պարապել և տեղացի հայերը, ուուսները, թուրքերը, վրացիք: Գործարանների մեծ մասը գտնուում են (12—24 տարով) կապալով վերցրուած աղնուականների հողերի վրայ—մի հանգամանք, որ խոշոր արդելք է հանդիսանում հողը հիմնականօրէն լաւացնելու համար (ջրելու, քարից մաքրելու, պարարտացնելու):

Գործարանները օգտուում են սեփական և վարձով վերցնող կովերի կաթովի Հին, աւելի հարուստ գործարանները ապահովուած են իրանց սեփական կովերով, նորերը կովերի $\frac{3}{4}$ — $\frac{1}{2}$ -ը վերցնուում են վարձով դանազան տեղերից. 8, 10, 15, նոյն իսկ 18 ուուրլով 4—5 ամիս պանրագործութեան շրջանի ընթացքում:

Բոլոր գործարանները ձգտում են ունենալ կարելիին չափ կաթնատու կովեր: Դրա համար նրանք բերում են կովեր Ռուսաստանից (Ղրիմի գերմանական կոլոնիաներից), բայց աւելի յաճախ վերադասում են խառնուրդով աղնուացնել տեղական ցեղերը և բուռպական աղնիւ ծագում ունեցող ցուլերի միջոցով: 40 տարուայ ընթացքում պ. կուշենբախին տեղական ցեղի և շիֆցի ցուլերի խառնուրդից յաջողած է ստեղծել յատուկ կաթնատու ցեղ, որ իր խոշորութեամբ և կաթի առատութեամբ յետ չի եւրոպական կաթնատու ցեղերից: Կուշենբախից վերցրուած հորթերը, մողիները, ցուլերը աղնուացնում են և միւս գործարանների անասունների ցեղը:

Այն ժամանակ երբ կովկասի դիւղերում միջակ կովի առած կաթի քանակութիւնը կարելի է ընդունել 20 պուդ, պանիրի գործարաններում միջակ կովը տալիս է մօտ 52 պուդ, իսկ

կուշենքախի ընտիր կովերով գործարանում 100 պուղից ոչ պակաս:

Բոլոր գործարաններում կաթի առատ ժամանակ $4-4\frac{1}{2}$ ամիս (մայիս—սնապտեմբեր) պատրաստում են պանիր, իսկ մնացած ժամանակ՝ կարագ իւղի կարագ պատրաստելու համար ամեն տեղ զործ են ածում սեպարատօններ և ամեն օր թարմ կաթից ստանում թարմ և քաղցր իւղ, որ մինչև քաղցր ուղարկելը (շաբաթը 1, 2 անգամ) պահում են սառնանցոներում: Պանիրը պատրաստում է կովի անքաշ թարմ կաթից. շվեյցարական (էմմննտալ անուանեալ) պանիրի ձևով: Թարմ կաթը, 30—60 պուդ քանակութեամբ, մեծ պղնձէ կաթսայում մողմ տաքացնում են և մերում մաքուր շիրդնի մերանով (Եւրոպայից ստացուած): $1-1\frac{1}{2}$ ժամից մակարդուած պանիրը մանր-մանր կտրում են յատուկ գործիքներով, տաքացնում մօտ $20-30$ բոպէ մինչև $60-70^{\circ}$, հանում կաթսայից (միանգամից) յատուկ գործուածքով, դնում կլոր զալիրի մէջ և քամում կատ քամուելու համար պանիրի գլուխը մի քանի անգամ շուռ են տալիս և $1-2$ օրուայ ընթացքում դնում ծանրութեան (յատուկ պրեսսի) տակ:

Երբ պանիրի զլուխը բաւականաշափ մզւում և ամրանում է, նրա վրայ աղ են անում և տանում առաջի տաք պահեստը. պահեստում վառարան է վառում կամ կրակ անուում, որպէս զի տաքութիւնը լինի $20-25^{\circ}$ C., Պանիրը մնում է այդտեղ մի քանի շաբաթ, ամեն օր 2 անգամ աղուում դրսից և ենթարկուում առաջի բուռն «ևիֆին»: Տաք պահեստից պանիրը փոխազրում են ցուրտ պահեստը, ուր նա մնում է մի քանի ամիս և նոյն իսկ տարիներ: Ենթարկուելով երկրորդ աննկատելի «ևիֆին», սկզբում աղում և սրբում են պանիրը ամեն օր, յետոյ աւելի ուշ-ուշ, շաբաթը, երկու շաբաթը մի անգամ. $10\frac{1}{2}$ պուդ կովի կաթից ստացում է 1 պուդ պանիր, որ հէնց առաջի աշնանը ծախտում է $9-13$ սուրբով:

Շվեյցարական պանիրի վերն բերուած պատրաստութիւնը ընդհանուր առմամբ նման է տեղական պանիրների պատրաստութեան: Զը նայած դրան, շվեյցարական պանիրը պահանջում է այնքան մաքրութիւն, այնքան նրբութիւն մանրամասնութիւնների մէջ, որ առանց հմուտ վարպեաի նա վչանում է: Անա ինչու բոլոր գործարաններում կան յատուկ վարպեաններ, որոնք եփում և աղում են պանիրը: Վարպեանների մեծ մասը կովկասում (ինչպէս և շատ ուրիշ տեղեր) շվեյցարացիք են, որոնք մասամբ կարծես ժառանգարար են իւրացրել այդ արհեստը: Տարինների փորձառութեան չնորիւ կովկասի գործա-

քանոներից մի քանիսում կան և տեղացի վարպետներ (թուրք, սուս, վրացի): Յամենայն գէպս, նոր գործարանների համար անհրաժեշտ պիտի համարել հմուտ վարպետի ներկայութիւնը: Վարպետին տուած ոռնիկը (600—1000 ռ.) կրկնակի կը վարձարուի նրա տուած օգտով: Որ պանրադործութիւնը կատարելազորդուած ձեռվ, չընայած իր մի քանի աւելորդ ծախսերի, ձեռնոտու է Կովկասում, երեսում է պ. Նիդիգէրի գործարանի հաշուից, որը ևս աւելորդ չեմ համարում այստեղ բնորել:

80-ական թուականներին պ. Նիդիգէրը ծառայում էր իրեն վարպետ Կուչենբախի մօտ 350 ռ. ոռնիկով: Տեսնելով ինչքան այդ ճիւղը արդիւնաւէտ է, 1884-ից նա սկսեց իր սեփական գործը և հիմա կարող է համարուել ապահով, նոյն իսկ հարուստ մարդ: 1899—1900 թուականներին նա վարձում էր 1500 դ. հող (արօտ և խոտհարք, վճարելով 2500 ռ.), կթում էր 250 և 320 կով, ունէր բացի այդ մօտ 150 սուրահ անտառն, մօտ 10 ձի, 15 խող (տան համար) սեփական շինութիւնների հետ միասին:

Նրա սեփականութեան արժեքի չափը հասնում էր.

1)	Շինութիւնների (ապրելու տուն, կաթնատուն, ախոռ 400 սալք. համար)	.	.	.	20,000 ռ.
2)	Անասուններ (320 կով 40 սուրլով, 150 սուրահ 25 ռ., ձիեր	.	.	.	17,250 »
3)	Կաթսա և այլ գործիքներ	.	.	.	1,000 »
					<hr/>
	Ընդամենը	.	.	.	38,250 »

Նիդիգէրի տարեկան եկամուտը և ծախքերը կազմում էին.

Եկամուտ.

Պանիր 710—1000 պ., 11—12 սուրլով պուղը—7,810—12,000 ռ.

Իւղ 200—150 » 17 » » 3,400—2,550 »

Աւելացած, ծախուած, մորթուած անասուններ 3,000—2,450 »

Ընդամենը 14,200—17,000 »

Միջին թուով 156 հազ. սուրլի:

Մախեր.

Հողավարձ	2,500 ռ.
Վարպետին և մշտական բանուորներին	1,200 »
Հովիւններին (20 հողի, 100-ական ռ.)	2,000 »
Կով կթողներին (ամառը 35 կին, ձմեռը 15)	400 »
Խոար պատրաստութեան ծախս—մշտելներին,	
Նրանց մնունդը	5,600 »
Վառելք և այլ մանր ծախքեր	300 »
						<hr/>
Ընդամենը	12,000 »

Զուտա արդիւնք ստացուամ է 3600 ռուբլի, որ կազմում է կապիտալի մօտ 100/0:

Եթէ ասածիս վրայ աւելացնել և այն որ մի քանի գործարաններ սկսել են իրանց խոտհարքները ջրել, աղբել, քարից մաքրել, լաւացրել են պանրագործութեան տեխնիկան, —անկարելի կը լինի ուրանալ, որ չվէյցարական պանրագործութիւնը ունի ահազին նշանակութիւն երկրի համար, Բայց ամենազլսաւորը ի հարկէ անամնապահութիւնից ստացուած եկամուտի աւելանան է:

Կատարելագործուած պանրի ու իւղի պատրաստելը պանրի գինը բարձրացնում է 2—4 ռուբլուց մինչև 10—12, իւղինը 8—10-ից մինչև 13—18, իսկ միջակ կովի տուած եկամուտը 15—20-ից մինչև 35—40 ռուբլին:

Զարմանալի չէ, որ այս պայմաններում չվէյցարացի հասարակ պանրագործներն ու չօբանները 10—20 տարուայ ընթացքում դիզում են տասնեակ հազարներ:

Դժբախտաբար պանրի ու իւղի պատրաստելը կատարելագործուած ձեռվ ու խոշոր ծաւալով ներկայ պայմաններում ունի և իր բացառական կողմնը և ինեւլով այն տեսակ ճիւղ, որ տալիս է խոշոր եկամուտ, բայց որի մասին տեղացի աղքաբնակութիւնը չունի գաղափար—չվէյցարական պանրագործութիւնը հանդիսանում է նոր միջոց հարուստների ու զիտունների ձևոքին կեղեկելու ու ճնշելու համար տգէտ և աղքատ ժողովուրդը, Առաջարկելով հողատէրերին աւելի ձեռնաու պայմաններ, «զավօղչիկները» հեռացնում են հողից զիւղացի աղդաբնակութիւնը, ցորենի ու գարու արտերի տեղ բուացնում են խոտ, հասնում են այն հետեանքին, որ միենոյն տարածութեան վրայ աղբում է աւելի քիչ մարդ, թէն աւելի շատ կով վերը յիշուած նիդիգէրի գործարանի տեղը 80-ական թուականներին գտնաւում էր Փաքր-Ղամարլու զիւղը, որի մէջ աղբում էին 24 ընտանիք թուակեր (մօտ 100—120 հոգուց բազկացած), Այդ ընտանիքներից ամեն մէկը պահում էր տաւար, ունէր լծկան, զիւղի ոչխարի հօտը հասնում էր մի քանի հարիւրի. ամեն ընտանիք վարում էր աղատ, աղանով կետնկ, անամնապահութեան հետ միասին անելով և մի քանի օրավար ցանքս երբ նիդիգէրը վարձեց Փաքր-Ղամարլուի հողերը և սկսեց իր գործարանը, կարձ զիմագրութիւնից յետոյ, զիւղացիք կամաց-կամաց ստիպուած էին յետ քաշուել, կրճատել իրանց անտեսութիւնը, իսկ յետոյ և բոլորովին թողնել հողագործութիւնը և հայրենի զիւղը, 80-ական թուականներին Ղամարլուում աղբում էր 24 անկախ ընտանիք 100—120 հոգուց, 88 թուին մնացել էր միայն 12 ըն-

տանիք (50 հոգի), որոնցից շատերը չունէին ոչ կով, ոչ ձի, ոչ եղբ, 1900-ին տեղայիշներից մնացել էին միայն 6 ընտանիք, որոնք 2 կովից աւել իրաւումք չունէին պահելու։ Տղամարդիկ նիզիգէրի հովիւներն էին, իսկ կանայք կթում էին նրա կովերը և ստանում ամիսը 1^{1/2}—2 ռուբլի։

1884 թուից առաջ 1500 դես. հողի վրայ ապրում էր 24 ընտանիք 100—120 հոգուց. 20 տարի յնտեղ, գործարան շինելուց յնտեղ, նոյն հողի վրայ ապրում է միայն 40 հոգի, որոնցից 2 ընտանիք շվեյցարացի աղաներ են, իսկ 6 ընտանիք տեղայիշ նօքարներ... Առաջ մի ջանի վրայ հաշւում էր 15 դես. հող, գործարան շինելուց յնտեղ՝ 375 դես.։

Նոյն բանը մնաք տեսնում ենք և միւս կապիտալիստական հողի վրայ դրուած գործարաններում։ Բարօն Գօն Կուչենբախի գործարանի տեղը առաջ դանուում էին Բօղադ-Քեսասան և Մամութիլ գիւղերը։ Հաշուելով (հարեան գիւղերի համեմատ) ջանի վրայ 5 դես., մնաք կը ստանանք որ զավողի տեղը (2500 դես. վրայ) ապրելիս պէտք է լինէին այսօր մօտ 500 հոգի կամ 80—100 գիւղական ընտանիք. իսկ հիմա, այդտեղ ապրում են՝ 1 բարօնի ընտանիքը, 5 գերմանացի ծառայողների և 32 ընտանիք թուրք նօքարներ, ընդամենը 177 հոգի։ Մի անձի վրայ հաշւում էր 5 դես. հող, իսկ գործարան բացելուց յնտեղ—14։

Պարզ է որ կապիտալիստական հողի վրայ դրուած կաթնաստեսութիւնը, իրեն հողագործութիւնից աւելի էքստէնզիւ (նահապետական) կուլտուրա, չի հաշւում ժողովրդի աճման մաքի հետ։ Նոր-Բայաղէթի դաւասում 1894 թուին պետական գիւղացիների միջակ անձի վրայ հաշւում էր 190 դես. հող, որից 0.07 դ. վարելու ու խոահարք, իսկ 1 դես. արօտ։ Այդ տարածութեան հողից գիւղացին ստանում է 365 ռ. եկամուտ և ապրում։ Ներկայ խոշոր կապիտալիստական պանրագործարաններում մի մեծատաւար պահելու համար հարկաւոր է մօտ 3 դես., որից 1 դես. խոտանարք վարելահող և 2 դես. արօտ. այդ տարածութեան վրայ մէկ կովի եկամուտը համար է 35—40 ռաւրլու. այսինքն ամեն մի մեծատաւար պահելու համար գործարաններում աւելի հող է բռնուում, քան պէտք է հողագործական լեռնային շրջաններում մի անձաւորութեան համար. իսկ միջակ զեսետինը տալիս է՝ համեմատական պայմաններում 192 ռ. եկամուտ, գործարաններում 117—133 ռուբլի։ Եթէ Նոր-Բայաղէթի զաւաոփ հողերը պետական չը լինէին, այլ մասնաւոր, և կապիտալիստներին յաջողուէր զարգացնել այստեղ խոշոր պանրագործութիւնը, մի անձնաւորութեան վրայ

այնտեղ հաշուելու էր 14—375 դես. հոդ և 5567 հազ. դես. տարածութիւն ունեցող գաւառում 125 հազ. բնակիչների տեղ կարող էր ապրել միայն 38—16 հազար...

Բացի այս, կապիտալիստական պանրագործները զրկելով գիւղացիներին հողից և ղարձնելով նրանց գործարանի ջրան և կթող, այսինքն գիւղական պրօլետարիներ, ստեղծում են այն տեսակ չարքաշ պայմաններ, որ ժողովուրդը զարգանալու տեղ գնում է դէպի յետ, նոյն իսկ չէ առում:

Դրան ապացոյց կարող է լինել նա, որ Բօրչալուի գաւառի պանրի գործարանների շրջանում զանազան կարգի գիւղերում նկատում է ժողովրդի աճման շատ տարրեր-տարրեր աստիճաններ:

Այն ժամանակ, երբ հարուստ Ալեքսանդրսդիլֆ կօլոնիան և դուխօրօնների Բաշքեշիթ գիւղում վերջի երեք տարին ժողորդի բնական աճումը հաւասար էր 45—35 %-ի, հայ Տաշրաչ, վրաց Գօմարէթ, յոյն Ցինցկարո և թուրք Օրուզման միջակ գիւղերում աճումը 3—20% էր, իսկ ազքատ մասնաւոր սեփականատէրերի հողի վրայ ապրող հայ Շիշթափա և պանրի գործարանների թուրք Ղամարլուի հասարակութեան մէջ ժողովրդի աճումը չէր հասնում մի տոկոսի և նոյն իսկ ազգաբնակութիւնը պակասում, ոչնչանում էր...

Ահա ինչու, խօսելով կատարելագործուած ձեռվ պանրագործութեան մասին, մնաք օգտակար պիտի համարենք միմիայն այն տեսակ ձեռնարկութիւնները, որոնց մէջ մասնակցում են իրանք գիւղացիք: Դա կարելի է անել կամ ընկերութիւններ կազմակերպելով գիւղացիներից կամ բացելով համայնական գործարաններ:

Այդ տեսակ գործարան Կովկասում կայ. դա Ալեքսանդրսդիլֆ (Ծալկա) գերմանական գիւղի համայնական գործարանն է: Սկզբում ծալկեցիք ստանում էին տէրութիւնից վարպետ, շվեյցարական ցուկեր, իսկ հիմա գործը տանում են իրանց պատասխանատութեամբ ընտրուած յանձնաժողովի միջոցով: Գործարանը ունի վարպետ (օգնականների հետ), որը ամեն մէկից ստանում է կաթը (նշանակելով առանձին տեսրակների մէջ), պատրաստում պանիր, իւղ և այլ մթերքներ: Գիւղի կողմից ընտրուած վարչութիւնը ծախում է պանիրը, իւղը և ամեն ամսուաց ու տարուայ վերջը տեսնում ընդհանուր և ամեն ընտանիքի հաջութ: Սկզբում գործարանը աշխատում էր միայն ամառը, շվեյցարական պանիր պատրաստելիս, բայց վերջի տարիները գիւղը օգտակար է համարած գործարանին յանձնել բոլոր տանը չը գործածուող կաթը, որից

գործարանը պատրաստում է իւղ, հում սեր (ԸՄԵՏԱՆԱ), թան (ՏՎՈՐՈԳԵ) և շաբաթը մի անգամ ուղարկում ԹԻՖԼԻՍԻ Գործարանի հաշիւները ենթակայ են ամենախիստ քննութեան, տանւում են շատ մարտր կերպով։ Աւելորդ չեմ համարում բերել այստեղ մի քանի թուեր այդ զիւղի մասին, որը կարող է տեղացիներին ծառայել իրեն օրինակ։

Սկսած 1887-ից մինչև 1900-ը համայնական գործարանի տնտեսութիւնը առաջ է զնացած այս չափով։

1887 թ. 1900 թ.

Բնատանիքներ	.	.	.	54	78
Կովեր	.	.	.	?	1,010
Ամսոր ստացուած կաթը (թունդի)	50,045	92,738			
Պատրաստուած պանիք պուդ	.	1,036	2,005		
Պանրից ստացուած դրամ ռ.	11,385	22,181			
Մի թունդի կաթի արժեքն է հան. իւղ.	23,66	25 ₆₃			

1896 թուից, ինչպէս վերև յիշուեց, գործարանը բացի պանրից սկսել է մշակել զիւղի ամբողջ կաթը իւղի, հում սերի և թանի համար, ուստի միջոց կայ հաշուելու և այդ ճիւղերի (ձմեռուայ ամիսների) նկամուաը, որ հաւասար էր.

1896 — 1899

Կաթ (թունդի)	.	.	.	75,400	74,000
Իւղ (պուդ)	.	.	.	675	525
Հում սեր »	.	.	.	354	422
Թան »	.	.	.	1,176	720

Ընդամենը սուբլի 14,081 17,029

Հաշուելով և այս գումարը, պանրից ստացած նկամուաի հետ, մնաք կը ստանանք որ Ալկրսանդրսպիլֆում միջակ կովը տալիս է 927 (պանրի շրջանում) և 75 (ձմեռուայ շրջ.), իսկ ընդամենը 168 թունդի (42 պուդ) կաթ։

Այդ բանակութեան կաթից պատրաստուում է 202 պ. չեմ-ցարական պանիք, 06 պ. կարաք իւղ, 06 պ. հում սեր և 10 պ. թան։

Այս ամենը զնահատուում է ամառուայ շրջանում 222 ռ., ձմեռուայ 170 ռ., իսկ ամբողջ տարուայ 392 ռ. Զը հաշուած կովերի տուած հորթը, կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուաը մի անձի վրայ հաւասար է 784 սուբլու, իսկ միջակ ընտանիքի 5030 ռ.։

Գերմանացիք Ալկրսանդրսպիլֆում տարէց տարի հարըստանում են նրանք լայնացնում են ոչ միայն անասնապահու-

թիւնը այլ և հողագործութիւնը. ունեն մօտ 10 դես. այդի (խնձոր, տամբուլ), նոյնքան բօստաններ, ուր բացի կարասիկից մշակում են և տակեր՝ ձմեռը կովերին կերակրելու համար. Բացի պետական հողերից (2126 դես.), համայնքը կապալով վերցնում է հողեր և հարեաններից (մօտ 2500 դես.), պահում է 15-ից աւել ցույեր ազնիւ կաթնատու ցեղերից. Բացի հնձի մշակներից, կօլօնիսամները ունեն 15 տարեկան նօքարներ (թուրք, վրացի, հայ) և 8 հոգի չօբան համայնքի հօտերի արածացնելու համար...

Գիւղացիների ապրուստը, տան կահկարասիքը, յիշեցնում են քաղաքացի ապահով արհեստաւորներին և վաճառականներին. Բնական աճումը 1898—1900 թուերին հասնում էր 45—70%-ի. Գիւղը ունի երկանո գալրոց, երգեցիկ խումբ, որը տօն օրերը հանդէսներ է ունենում:

Ահա ինչ հետևանքների է հասցնում կատարելագործուած տնտեսութիւնը, կազմակերպուած ժամանակի պահանջի ու ուգու համեմատ:

Եթէ մեր լեռնային գիւղերում զարգանայ կատարելագործուած պանրագործութիւնը ու իւղ պատրաստելը, մեր ժողովրդի կաթնեղէններից ստացած եկամուտը, նեւ ու ջանի վրայ (45₁₂ ո., ընտանիքի) կը բարձրանայ մինչև 11₂₂ » »

» (904 » ») և աւելին Դա զժուար չէ անել, ուրովինետե դիւղացիք ունեն պատրաստի կաթը, պատրաստի զոմեր և կեր անասունների համար, ունեն հմտութիւն և սէր գէպի անասնապահութիւնը ու կաթնատնտեսութիւնը: Մնում է նրանց գիտակցութիւն, ազնիւ զեկավարներ, նոյն իսկ մի զնկափար և մօտ 2000 ո.՝ գործիքների և կաթնատուն շինելու համար.

Մեր գիւղացիք, հարկաւ, գերմանացիներ չեն, բայց... նրանք շատ լաւ հասկանում եւ ըմբռնում են իրանց շահը և զեկավարների հետ ձեռք ձեռքի տուած հեշտութեամբ կարող են իրագործել այն, ինչ որ անում են առաջազէմ ազգերը: Տարրերութիւնը կը լինի միայն աստիճանի մէջ: Եթէ կուլտուրապէս բարձր, կրթուած, լաւ հասարակական կարգեր ունեցող ազգերը անում են տարին 4—5 քայլ գէպի առաջ, մենք կ'անենք 3, 2 քայլ: Մեղ համար սա էլ յաջողութիւն է: Յարուցուած հարցերի տեսակէտից առաջազէմ ազգերից կաթնատնտեսական, ինչպէս և այլ արդիւնարերական ընկերութիւնների կազմակերպելը կարեոր և անհրաժեշտ է և մի այլ տեսակէտից: Ինչպէս յայտնի է ընդհանրապէս և ինչպէս տեսնում ենք մենք

մեր նեղ շրջանում, վերջերս արագ կերպով դարձանում է հա-
զորդակցութիւնը և սրա հետ միասին վաճառականութիւնը:

Եթէ 100 տարի առաջ կովկասցի զիւզացին իր սպառած
մթերքներից 10%-էր ստանում դրսից, իսկ 99% պատրաստում
տանը, 50 տարի առաջ դրսից առնուող մթերքները կազմում
էին նրա սպառելիքի 10%, իսկ հիմա կազմում են 20,30,40%:
Շատ հաւանական պիտի համարել որ 20,50,100 տարուց յետ
մեր զիւզացու դրսից առնուելիք մթերքների տոկոսը կը բար-
ձրանայ մինչև 50,70,90%...:

Աշխատանքի բաժանումը առաջ է զնում այնպիսի արագ
քայլերով, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ամենն աշխատող
կը զրադուի, միայն մի նեղ ճիւղով, ծախելով իր արտադրած
մթերքների 50,80,90%-ը ուրիշներին և ստացած դումարով
դրսից առնելով իրան անհրաժեշտ պիտոցքների 50,80,90%-ը:

Ահա ինչու միջնորդ, վաճառական դասակարգի գերը տա-
րեց տարի մնանում է և այդ դասակարգը օգտուելով և ար-
տադրողից և սպառողից զիւղում է չը տեսնուած հարստու-
թիւն...

Ինքն ըստ ինքնան պարզ է, որ և արդիւնաբերողի և սպա-
ռողի շահերը պահանջում են հաստատել միմեանց մէջ անմի-
ջական կապ, դուրս վանդել մէջ տեղից վաճառական դասակար-
գը և վերջինիս ստացած եկամուաը բաժանել միմեանց մէջ:

Այս հարցը կազմում է ներկայ անտեսական պայմանների
լուծելիք պրօբլեմներից մէկը և դրա համար աշխատում են շատ
և շատ ոյժեր:

Բայց ով չը զիաէ, որ վաճառականական կապեր հաստա-
տանելու համար հարկաւոր է խոչքը գործ, հարկաւոր են հմուտ
և բանիմաց մարդիկ, հարկաւոր է կատարելագործուած տնտե-
սութիւնն ներկայում մեր արդիւնաբերութիւնները, մանաւանդ
զիւզացիների, այնքան փոքր են, որ նրանք անկարող են սե-
փական առեստուր սկսել. այդ ձեռնարկութիւնների ելնմուաքը
ունի այնքան ծաւալ, որ նրանք չեն կարող դիմանալ ոչ մի
շօշափելի ծախսերի, այս կամ այն կատարելագործութիւնը մըտ-
ցնելու համար. մասնաւորապէս կաթնատնտեսութեան և անաս-
նապահութեան վերաբերմամբ պէտք է համարել պարզ որ 5—
10 կով ունեցող զիւզացին չի կարող 50—100 ո., արժէք ու-
նեցող սեպարատօր, խնոցի և այլ կատարելագործուած գործիք-
ներ առնել կարագ պատրաստելու համար: Դա ձեռնտու է ա-
նելի 20—30 կով ունեցողին. իսկ 20—30 կով ունեցողը, որ կա-
րող է պարապել կարագ պատրաստելով, չի կարող զբաղուել
շվեյցարական պանիրի պատրաստութեամբ, որովհետև վերջինիս

համար պահանջւում է ամենաքիչը 30—40 պուդ կաթը, որ կարելի է ստանալ միայն 100—150 կրվից. շվեյցարական պանիր պատրաստելու համար անհրաժեշտ է 600—1000 ռ. ստացող վարպետ, յատուկ յնութիւններ և այնու Մի քանի հարիւր կով ունեցողը (ընկերութիւն, համայնք կամ մասնաւոր մարդ) կարող է պատրաստել և իւզ, և պանիր շվեյցարական ձևով, բայց անհարող է մնանակ զբաղուել մսի առևտուրով, որովհետեւ վերջինս լաւ զնելու համար հարկաւոր են հարիւրաւոր տաւարներ 100 մասցու կամ 1000 ոչխար ունեցողը կարող է սկսել սեփական մսի առևտուր որեւէ գաւառական քաղաքում, բայց ոչ Թիֆլիսում: Վերջինիս համար պահանջւում է օրական մորթել 5—10 միծատաւար, 20—30 ոչխար, մի քանի խոզ և այնու Բայց սաեւ բաւական չէ. հազարաւոր գլուխ ապրանք ունեցող Թիֆլիսի չօդարները կարող են սեփական առևտուր ունենալ Թիֆլիսում, բայց նրանք չեն կարող մտնել վաճառականական յարաբերութիւնների մէջ Եւրոպայի (Մարսէյլի, Լօնդոնի, Համբուրգի) հետ Լօնդոնի հետ կապեր հաստատելու համար չի կարելի նաևով 50, 100 ոչխար ուղարկել. նաևերի սանսանոցները պահանջւում են միև հարիւրաւոր, հազարաւոր, տասնեակ հազարաւոր պուդերով: Արտասահմանի հետ առևտուրը կարող է յաջող զնալ միայն այն ժամանակ, երբ նա կատարւում է ոչ թէ մէկ, երկու, տասը անգամ, այլ պարբերաբար, տարիների ընթացքում:

Քանի խոչոր է ձեռնարկութիւնը, այնքան նա աւելի է տանում կատարելազործութիւնների համար անհրաժեշտ ծախսներ, նոյնքան պակաս է լինում ընդհանուր ծախսները, այնքան աւելի հեշտ և ձեռնառու է այդ ձեռնարկութեան առևտուրը զնել շահաւետ հողի վրայ: Սյղպէս է միջազգային շուկայի և ներկայ մնանական պայմանների պահանջը:

Դրան հպատակուել ենք և մնեք... Դժբախտարար մնաք չենք կարողանում դեռ ևս օգտուել վերջերս ասած եկած լայն միջազգային յարաբերութիւնների դիւրութիւնից: Մենք արտադրում ենք միջազգային շուկան նաևթ, մնտաքս, հում կաշի —այն մթերքները, որ արտադրում էին և մեր պապերը: Բայց մեր ահագին արժեք ունեցող փայտեղէնը, մեր հիանալի համ ունեցող ոչխարը, խողը, մեր չնչին զին ունեցող միաը —մնում են միմիայն մեր քաղաքացինների համար և ծախտում չնչին գնով:

Օդեսայից (կամ Բաթումից) մեծ քանակութեամբ գարի, ցորեն և սիմինդր ուղարկելիս Մարսէյլ, Համբուրգ, Լօնդոն,

պուղը նստում է 9—11 կոպէկ^{*}). Նոյն չնչին գնով կարելի էր արտասահման փոխադրել և մեր միսը, իւղը, կաթնեղէնները, Այն ժամանակ այդ բոլոր մթերքների դները մեր երկրում կը կրկնապատկուէր և կեռապատկուէր, Դրա համար հարկաւոր է միայն պատրաստել ապրանք միջաղդ. շուկայի պահանջի համեմատ, ստեղծել խոշոր վաճառականութիւն արտասահմանի հետ, մանաւանդ կազմակերպուած ընկերական հողի վրայ։ Հարկաւ, միանգամից այս ամնըն չի լինի, բայց թող զարգանան մեղ մօտ մանը ընկերակցութիւնները ու համայնական ձեռնարկութիւնները և մնաք կը տեսնենք ինչպէս մօտ ապագայում մեր մթերքները կօնդօնում և այլ տեղեր մրցում են Դանիայի, Կանադայի, Աւստրալիայի և այլ առաջադէմ երկրների մթերքների հետ։

Ընկերութիւնները միջոց կը տան դնել գործերը խոշոր հողի վրայ և մտցնել տեխնիկական կատարելագործութիւններ, օգտուել մասնագէտների հմտութիւնից, ընկերութիւնները կազատեն մեր ժողովուրդը միջնորդների ճանկերից, միջոց կը տան մեղ բանալ նոր, անսահման շուկաներ, որով զդայի չափով կը բարձրացուի մեր աղքատ ժողովրդի բարեկեցութիւնը։

Թող օտար երկների փորձը լինի մեղ օրինակ։ Մի քանի տարի առաջ Ռուսաստանի հիւսիսային նահանգները պանիր ու իւղ էին պատրաստում միայն ներքին շուկայի համար, այսինքն Ռուսաստանի քաղաքներին Բայց ահա երեան եկան շվերգացի և ֆինլանդացի կաթնատնեսներ, որոնք սկսեցին պատրաստել կարագ իւղ այնպէս, ինչպէս պահանջում է Անդմայի շուկան և այդ ճիւղը տարէց տարի ստանում է աւելի և աւելի մնծ ծաւալ։ Սիրբիրայի երկաթուղին անցկացնելուց յետոյ պետք է այդ անդամ համար յատուկ իւղ պատրաստող վարպետներ, երկաթուղու մէջ մտցրեց յատուկ վագօններ և գործը արագ քայլերով սկսեց առաջ գնալ։

Պ. Աւետ. Քայլանթարի ասելով 1900 թուին Սիրբիրայից Անդմիա է արտահանուած 12 միլ. ոռուրլու կարագ իւղ, 1901-ին մօտ 20 միլ. ոռուրլու իւղ, իսկ եկող 1902 թուի համար սպասում է որ արտահանուելիք իւղի արժէքը կը հասնի մինչև 30 միլ. ո.՝²⁾

Անցած ամառ շատ անգամ պատահել է, որ երկաթուղին ստիպուած է եղել կազմակերպել յատուկ գնացքներ (5—7 վա-

^{*}) Կասպերօվ, Խենբայ Տօրգօմյա.

գօնից) միմիայն կարագ փոխադրելու համար, Ասում են, երկաթուղու վարչութիւնը նորից պատուիրել է կառուցել 200 վարդօն կարագի փոխադրութեան համար:

Սիրիրիայի ահագին արածութիւնը մի կողմից, իւղագործութեան տեինիկայի զարգացումը միւս և, որ ամենազբախաւորն է, ապահով Անգլիայի չուկան երրորդ կողմից զրաւական են, որ Սիրիրիայի արտահանութեան համար իւղը կը խաղայ առաջնակարգ տեղ:

Դրա հետևանքները հիմա էլ արդէն նկատում են, առաջ կաթի պուղը Սիրիրիայում ծախւում էր 20—30 կոպէկով, իսկ հիմա արժէ 40—50 կոպ., Առել է, ժողովրդի եկամուտը կաթնատնտեսութիւնից վերջի մի քանի տարուայ ընթացքում Սիրիրիայում կրինապատկուել է...

Մեծ քայլեր, ինչպէս առասարակ, նոյնպէս և կաթնատնտեսական և անասնապահական ճիւղերում, արել են վերջերս Ամերիկայի Միացեալ-Նահանգները:

«Բամբակի մշակութիւնը Միացեալ-Նահանգների հարաւային մասում—ասում է նորերս Ամերիկայից վերադարձած գիւղատնտես Տարատնովը իր նախնական զեկուցման մէջ »)— վերջի 15 տարուայ ընթացքում ոչ միայն բռնել է աւելի մնձ տարածութիւն և աւելացրել բերքը, այլ և ստացել առաջնանից շատ աւելի կարեւոր նշանակութիւն։ Սրա պատճառը նա է, որ բացի մաքուր բամբակից, այս մշակութեան մէջ շատ կարեւոր տեղ են սկսել բռնել սերմը, որից ստացում է զեղեցիկ ձեթ, կոպտոնը և նրանից ստացած ալիւրը իրեն լաւագոյն և արժան էկերս անասունների համար և վերջապէս բամբակի սերմի կեղեց—իրրե խոտին փոխարինող լաւ սուրբօգատ:

Վերջերս ընդունուած ծմբարտութիւն է համարում, որ բամբակ արտադրող նահանգները Ամիրիկայում հանդիսանում են միաժամանակ և անասնապահութեան նահանգներ, այս ինչ առաջ «կերի պակասութեան պատճառով» այս նահանգներում անասնապահութեամբ համարեա չէին պարապում։ Բամբակին մշակութեան զարգանալու հետ միասին առաջ եկաւ լաւ և արժան «կերի» մնձ քանակութիւն, որի պատճառով հարաւում արագ կերպով զարգացաւ անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը, բամբակից ձեթ հանող գործարաններից շատերում պահուում են մասցւ և կաթնատու ապրանքից ահագին հոտերու Մի փունտ կոպտոնի ալիւրին խառնում են առասարակ 4—5 ֆ. սերմի կեղեց, անասունները մնուելով այս կերպով, արագ

կերպով մսի ևն դալիս և չաղանում... Անասունների համար լաւ կեր ամերիկացիք ստանում են և սիմֆնզրի (եզիպտացորենի) բնից, որը յատուկ մեքենաներով մանրացնում են: Հարաւային նահանգներում ամեն տեղ զարգանում է խոտացանքով և անամնապահութիւնը:

Խնչովս պետական ու մասնաւոր փորձնական ազարակեները, նոյնպէս և օրինակելի մասնաւոր ազարակները զբաղուած են այն կարեսը հարցով, թէ ինչպէս վերականգնել հողերի առջուալ ոյժը, որ սպառուած է շնորհիւ միատեսակ բոյսերի անընդհատ մշակութեան: Սրա համար դիմում են թիթեռնակերպ խոռերի ցանքսի («հարաւի երեքնուկը և այլն») խորը և մաքուր վարի ու մշակութեան, պարարտացման ամենալայն ծաւալով...

Յողոր փորձնական կայարաններում և լաւ ազարակներում ներկայումս ամենալուրջ ուշադրութիւն է դարձրուած բամբակի, սիմֆնզրի, հացահատիկների նոր տեսակներ առաջ բերելու վրայ: Սա անում է և լաւ, տեղական պայմաններին համապատասխան սերմեր ջոկելով և մի քանի տեսակների փոշիները խառնելով արհեստական միջոցով»...

**Ահա ինչու Միացեալ-Նահանգները կաթնեղէններ
արտահանում և ներմուծում էին *)**

1889—93	20 ₀	միլ. ռ.	27	միլ. ռ.
1894—98	16 ₀	»	31	»

Այն ինչ Միացեալ-Նահանգներից համարեա երկու անգամ աւելի մնձ Ռուսաստանը արտահանում և ներմուծում էր կաթնեղէններ՝

արտահանում	ներմուծ.
1883—87	82 միլ. ռ.
88—95	48 » » 20 » »
93—97	41 » » 14 » »

Նոյն ահազին տարրերութիւնը մնաք տեսնում ենք մսի ու այլ անամնապահութեան մթերքների վերաբերմամբ:

1896 թուին Ռուսաստանից արտահանուած էր արտասահման **). 98 միլ. ռուբլու կենդանի անասուններ, 135 միլ. ռ. թարմ և աղած ու չորացրած միս, 34 միլ. ռ. պանիր և իւզ, ընդամենը 267 միլ. ռուբլու, կամ 22 կոպէկի կայսրութեան միջակ անձնաւորութեան վրայ:

*) Раддигъ, Скотоводство и Молочное хов-во въ разныхъ государствахъ.

**) Энциклопед. словарь Эфрона, „Россия“.

1891—92 թուականներին Ամերիկայի Միացեալ-Նահանգների արտահանութիւնը անասնապահութեան և կաթնատնտեսութեան մթերքներով հաշւում էր *).

Մեծատաւար	640	միլ. ռ.
Միս տաւարի	650	" "
» խոզի	102	" "
Սուջուղ (մսի)	173	" "
Ճարպ . . .	785	" "
Խւղև մարդարին	51	" "
Պանիր . . .	158	" "

Ընդամենը 2557 միլ. ռուբլու, կամ մի անձնաւորութեան վրայ միջին թուով 406 ռուբլի Կարծեմ աւելորդ է յիշել այստեղ, որ այդ ահազին տարբերութեան ամենազլսաւոր պատճառը Միացեալ-Նահանգների և Ռուսաստանի կուլտուրական, տնտեսական և հասարակական պայմանների տարբերութեան մէջն է...

Եւ ճիշտ, այդ երկու երկրներում, 90-ական թուականներին հաշւում էր **).

Թուաստան. Ամերիկայի
Միացեան.

Աղջաբնակութեան թիւ, հազարներով	116,100	62,982
Ամեն 10,000 հոգուց դպրոց յաճախող	237	1,293
» 1,000 » անդրագէտներ	708	0
Գարբերական հրատարակութ. ընդամ.	705	16,319
Հում երկաթ, ընդամ. ցիստներ	746	8,413
Քարածուխ » » .	6,208	143,187
Բամբակեղին մանելու համար իլիկներ		
հազար	3,828	13,400
Երկաթուղի (քիլոմ.) ամեն 10,000 ք.		
քիլոմ. տարած. . . .	58	302
Բոլոր ապրանքների ներմուծում միլ. ռ.		
(1890)	674	1,729
Բոլոր ապրանքների արտահանութիւն		
միլ. ռ. (1891)	1,142	1,777
Գետութեան եկմուտը միլ. ռ.	1,436	909
» ծախսը » » »	1,564	859
» պարուջը » » »	6,703	3,246

*) Prof. Juraschek. Geographisch statistische Tabellen 1992 j.

**) Ibid,

Թուերը շատ պերճախոս են:

Ներմուծման և արտահանութեան վերաբերեալ թուերը պարզելու համարը անհրաժեշտ է միայն յիշեցնել, որ ինչպէս և աղքատ անհատներ, իր պարտքերի համար Ռուսաստանը տալիս է ուրիշներին մօտ 500 միլիօնի մթերքներ աւել, քան ստանում է: Նոյն կուլտուրական տարրերութիւնը ունի ահազին նշանակութիւն և նրա վերաբերմամբ, որ առաջադէմ և կուլտուրապէս աւելի բարձր Ամերիկան ու միւս երկիրները աւելի արագ են կատարում իրանց անտեսական զարգացումը, քան դա նկատում է աւելի յետ մնացած Ռուսաստանում և կովկասում:

Մեր շօշափած հարցերի նկատմամբ առանձին ուշադրութեան արժմանի է Դանիան: Վերջին 25 տարուայ ընթացքում վերջինիս զիւղատնտեսութիւնը կրած է անհաւատալի փոփոխութիւն^{*)}: Դեռ մօտ անցեալում Դանիան ապրում էր հացալ և հողագործութիւնը այդ երկրում խաղում էր իշխող գեր: Վերջի տարիների զիւղատնտեսական կրիզիսը (հացի գնի իջնելը) ստիպեց դանիացոց մտածել զիւղատնտեսական փոփոխութիւնների մասին: Օգտակար համարուեց հացահատիկների տեղով ոյժ տալ խոտի ցանքսին և անասնապահութեան: Այդ համոզմունքի հետևանքը եղաւ նա, որ 1876 թուից սկսած հացահատիկների բռնած տարածութիւնը պակասած է Դանիա երկու անգամ և սրա համեմատ լայնացած սիրի-սիրիի, եօնջի, տակերի բռնած տարածութիւնը, որոնք այսօր բռնում են երկրի 1/3 մասը: Մրա հետ միասին 35 տարուայ ընթացքում 56% ո-ով աւելացաւ տաւարի թիւը: Ոչ մի երկիր Եւրոպայում անասնապահութեան վերաբերմամբ չի տուել այսչափ արագ զարգացում:

Անասնապահութեան զարգացումը արհեստական պարագայնող նիւթերի հետ միասին ունեցաւ այն հետևանքը, որ 25 տարուայ ընթացքում հացահատիկների բերքը Դանիա բարձրացաւ՝ ցորենի 250%, խրբուկի 170%, կարառիկի 59%, իսկ խոտերի 180%:

Աւելի զարմանալի են այն միջոցները, որոնցով Դանիան հասաւ այդ հետևանքի: Կուլտուրական բարձրութեան հետ միասին այդ երկիրը ներկայացնում էր մանր հողատիրութեան վայր: Ժողովրդի 2/3 մասը ունի 10 դես. պակաս հող:

^{*)} Պրօֆ. Զուտլով. Խթ զարգացուցանք, „Русскія Вѣдомости“, 1901, № 172.

Գիւղական ազգաբնակութեան 40% պահում է	1—3 կով-
29 »	» 3—9 »
27 »	» 10—59 »
4 »	» 30 և աւել.

Մի քանի անձնուէր շրջող գիւղատնտեսներ մտածելով ինչ միջներով օգնել գիւղացիներին, եկան այն եզրակացութեան որ կաթնատնտեսութեան համար անհրաժեշտ մեքենաները, ինչպէս և այդ մթերքների առևտուրը յաջողակ կարելի է տանել միայն այն ժամանակ, եթէ գիւղացիք համախմբուեն ընկերութիւնների:

Գիւղատնտես միօրդի և ընկերների քարոզը զուր չանցաւ Առաջին ընկերական կաթի գործարանը բացեց 1882 թուին անամապահ Անդերսոնը Գործարանի գործերը զնացին յաջող և շուտով Անդերսոնը ունեցաւ հետեղներ, 1899 թուին Դանիան հաշում էր 1013 ընկերական և 260 համայնական կաթնատներ (գործարաններ): Ամեն մի գործարանի վրայ միջին թուով հաշում էր 800 կով: Գործարանները ունեն ամեն տեսակ յարմարութիւններ՝ սեպարատորներ, պասաերիզացիի (չը փշանալու համար) ենթարկող մեքենաներ և այլն: Այդ պատճառով կաթնատները նստել են բաւականին թանգ (4000—20,000 ռ.):

Որպինետե այդ ծախսերի մեծ մասը կատարուած է պարագ վերցրուած զրամով (4—5% ո-ով), ամեն կովի վրայ այսօր պարագ է հաշում 17 ռուբլի:

1898 թուին գործարանների անդամ էր հաշում 148,000 ծխատէր 842,000 կովերով: Մի կովը միջին թուով տարին տալիս էր 135 պուդ կաթը, որի ամեն մի 265 պուդից ստացւում էր մի պուդ իւղ: Ընդամենը գործարանները ստանում էին 46 միլ. պ. իւղ: Այդ իւղի ամենամեծ մասը փոխադրուում է Անդելիս: Որպէս զի այդ փոխադրութիւնը ստանայ աւելի լայն ծաւալ, դանիացիք էլի դիմուցին ընկերութիւնների: 1887 թուին կազմուեց առաջի ընկերութիւնը իւղի արտահանութեան համար, որին մասնակցուցին 84 կաթի ընկերական գործարաններ, 1899-ին այդ ընկերութեան տարեկան եկմուտքը հասնում էր 14 միլ. ռուբլու:

1895-ին կազմուեց երկրորդ խոշոր ընկերութիւնը իւղեարտահանութեան համար, իսկ յետոյ ուրիշ աւելի մանրերը:

Սկսուած գործ զարգացաւ աւելի և աւելի 1887-ին Դանիա կազմուց առաջի ընկերութիւնը միս արտահանելու համար, միւս տարին կազմուեցին 7 նոյնանման ընկերութիւններ:

Ներկայումս մտի արտահանութիւնների թիւը հասնում է 25-ի 56,000 անդամներով, որոնք 1899-ին արտահանութիւնն համար մորթած են 780,000 խոզ, 22,500 մնձատաւար, 17,000,000 ռ. արժողութեամբ:

Ընկերութիւններին անհրաժեշտ կապիտալը վերցրուած է տոկոսով և ապահովուած անասունների թուի համեմատ Բուլոր ընկերական սպանդանոցները կապուած են Կոպէնհագէնի կենտրոնական միութեան միջոցաւ, որը մշտական յարաբերութեան մէջ է արտասահմանի հետ և հաղորդում է անդամներին անդեկութիւններ պահանջի և գների մասին:

Ընկերական սկզբունքը մտած է Դանիա և... ձուի առետուրի մէջ: 1895 թուին երկու գիւղական ուսուցիչներ (Յօրգենսոն և Մելլէր) սկսեցին գիւղացիների մէջ քարոզել որ արտահանուող ձուերի ժողովելը և ծախելը հարկաւոր է գնել առմիտ ազնիւ և կանոնաւոր հոգի վրայ և կազմեցին առաջի ընկերական միութիւնը Մելլէրի նախագահութեամբ: Ընկերութիւնը բացեց ճիւղեր գիւղերում, որոնց անդամները պարտաւորուեցին տալ միայն նոր ածած ձուեր: Չուերը ժողովում են շարաթը մի անդամ և հակողութեան համար ձուի վրայ նշանակւում է անդամի և ճիւղի համարը Ամեն մի հին ձուի համար նշանակուած է տուգանք $2^{1/2}$ ռուբլու չափով. Անգլիայում Դանիայի թարմ ձուերը գնահատում են ամենաբարձր գնով: Ընկերութիւնը սկսեց իր գործը 6 ճիւղերով 2000 հոգու անդամակցութեամբ, իսկ հիմա, հինգ տարուց յնտեղ, ունի 365 տեղական ճիւղ 22,000 անդամներով...

Բայց վերը բերած արտահանող ընկերութիւններից Դանիայում արագ կերպավ զարգանում են և սպառող ընկերութիւնները, որոնց թիւը այսօր հասնում է 837-ի 130,000 անդամներով: Կոպէնհագէնի կենտրոնական սպառող ընկերութիւնը միացնում է 580 տեղական ընկերութիւններ և նրա կատարած ելեմուագը 1899-ին հասնում էր 4,400,000 ռ.:

Եթէ գումարել բոլոր ընկերութիւնների անդամների թիւը, մենք կը ստանանք 370,000, որ նշանակում է թէ Դանիայի ազգաբնակութեան մնձամասնութիւնը մասնակից է սպառող և արտադրող խոշոր ընկերական միութիւնների տուած սգուաներին:

Ինչ մեծ ազդեցութիւն ունի ընկերութիւնների զարգանալը և նրանց տուած օգուածը Դանիայի տնտեսական զրութեան վրայ—մնակ ճշտօրէն չը գիտենք: Յամենայն դէպս պարզ է, որ խնայողական զրամարկզներին մասնակցողների թիւը, ինչպէս և մասնակցութեան գումարը որոշ չափ պարզում է

զանազան երկրների բարեկեցութեան չափը: Եթէ դա պյտպէս է, անկասկած պիտի համարել, որ Դանիան այդ կողմից բըս-նում է առաջնակարգ տեղ: Պարիզի ցուցահանդէսում այդ կողմից համեմատութիւն էր զրուած կուլտուրական ազգերի մէջ: Այդ համեմատութիւնից երեսում էր, որ ամեն մի 100 հոգուց խնայողական ընկերութիւնների մէջ մասնակցում էին՝ Դանիա 46, Գերմանիա 26, Ֆրանսիա 25, Եւրոպ. Ռուսաստան 3 հոգի: Խնայուած դրամի չափը ամեն մի անձնաւորութեան վրայ համառում էր՝ Դանիա 135 ռ., Գերմանիա 69 ռ., Ֆրանսիա 41 ռ., Եւրոպ. Ռուսաստան 7 ռ.:

«Եթէ յենուել այս թուերի վրայ,—վերջացնում է իր խօսքը պրօֆ. Զուպրօվը,—դուքս է զալիս որ ոչ թէ միայն մեր հայրենիքը, այլ և անտեսական զարգացման ճակատին կանգնած երկիրները նախանձելու և օրինակ են վերջնելու փոքրիկ Դանիայց և նրա համեստ հողագործներից»...

Ս. ԶԱՒԱՐԵԱՆ